

շնորհքով. համարեա բոլորն էլ յաջող են: Դրանում համոզուելու համար բաւական է վերցնել և կարդալ «Գեղջուկ և Օձ», «Ագռաւ և Աղուէս», «Գորտ և Եղ», «Աքաղաղ և Մարգարիտ», «Մեր և Մահ», «Երկու Շուներ», «Էջ և Սոխակ», «Քողը կաշնւոյն ներքե» և այլն:

Մեր նոր առակագրի արժանաւորութիւններն են՝ սահուն և գողտրիկ ոտանաւորը, որ առակի բովանդակութեան համեմատ արագ փոփոխում է՝ մերթ երկարելով մերթ կարճանալով: Առակի յարմար լեզուն և ոճը՝ լիքը նուրբ դարձուածներով, սրամտութեամբ, անակնկալ համեմատութիւններով և, վերջապէս, առակների հայացքած ընդհանուր ոգին:

Մնում է միայն ցանկանալ, որ «Առակների» երկրորդ տպագրութիւնը ազատ լինի այն բաղմամբիւ վրիպակներից, որոնցով լիքն է գրքոյկը:

Հետոն Մանուէլեան

Վ. Բաւկէ կարչեմ սօցիալ-դեմօկրատները, հրատ. Յ. Դաւթեանի, Թիֆլիս, 1906, գինը 12 կոպ.

Մեր հայկական իրականութեան մէջ ամեն մի գաղափար տարածուած է մեր ժողովրդի մէջ սարսափելի կերպով այլանդակուած, թարս: Վերցրէք ընտրութիւնը դաշնակցական իմաստով, դեմօկրատիան դաշնակցական դեմագոյների հասկացողութեամբ, «ազգընտիր կաթողիկոսի» միահեծանութիւնը նոյն կամարիւայի բացատրութեամբ և այլն և այլն: Սոցիալ-դեմօկրատների մասին էլ թէ այդ հայ ազգասէրները և թէ նրանից շատ էլ հեռու չգնացած հնչակեանները ամենախակ իմաստով կարծիքներ են տարածել ժողովրդի մէջ: Ներկայ բրօշիւրը կարող էր փարատել այդ թիւը հասկացողութիւնները: Անհասկանալի է թէ ինչու ժողովրդական այդպիսի մի հրատարակութեան մէջ գերմաներէն ցիտատները բերուած են առանց հայերէն թարգմանութեան: Միթէ գերմաներէն հասկացող ըկարիք կը ունենար Շւոտի կատարած այդ բրօշիւրի թարգմանութեան: Անփոյթ և անիմաստ բան է այդ, չէ: Նոյն գրքի թարգմանութիւնը «Բան-Դրադոտ» հրատարակութեամբ արժէ 10 կոպ:

Na